ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Erasmus+ ծրագիր՝ «Ընդլայնված հնարավորություններով մանկավարժ»

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Տաթևիկ Փնջոյան, ՀՀ ԿԳՄՄՆ «Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Հունաստանի Հանրապետություն, ք. Լեֆկադա, 2026 թվականի սեպտեմբերի 20-ից 30-ը:

3. **Հրավիրող կողմը.**

«Մոնոպատիա Սոլիդեգիիս» / Solidarity Tracks/ կազմակերպություն, ք. Լեֆկադա, Հունաստան

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Վերապատրաստման ընդհանուր նպատակն է հզորացնել երիտասարդների հետ աշխատող մասնագետներին, մանկավարժներին և վերապատրաստողներին՝ երիտասարդների համար բարձրորակ ոչ առցանց (offline) կրթական միջոցառումներ նախագծելու, իրականացնելու և գնահատելու գործում՝ արհեստական բանականության գործիքներն իրենց մանկավարժական գործունեության մեջ արդյունավետ և պատասխանատու կերպով ներառելու միջոցով, և այդպիսով զարգացնել նրանց դերը որպես «հզորացված մանկավարժներ» (Augmented Educators):

5. **Քննարկված թեմաները.**

Վերապատրաստման ընթացքում քննարկվել և գործնական աշխատանքների միջոցով ուսումնասիրվել են հետևյալ հիմնական թեմաները.

1. Augmented Educator-ի հայեցակարգը և արհեստական բանականության միջոցով մանկավարժի մասնագիտական կարողությունների ընդլայնումը,
2. Արհեստական բանականության պատասխանատու և արդյունավետ կիրառումը կրթության և երիտասարդների հետ տարվող աշխատանքում,
3. AI գործիքների հետ զրույց՝ առաջադրանք տալու արվեստի կիրառումը ոչ ֆորմալ ուսուցման նախագծման գործընթացում,
4. Ուսուցման նպատակների հստակ ձևակերպում և SMART նպատակների կիրառություն,
5. Behaviour – Condition – Criteria մոտեցման միջոցով ակնկալվող ուսումնառության արդյունքների ձևակերպում,
6. Ոչ ֆորմալ կրթության մեթոդներ, կարիքներից անցում դեպի ուսուցման խնդիրներ,

7. Քննադատական մտածողության զարգացում և տեղեկատվության վստահելիության գնահատում,

8. Միջմշակութային ուսուցում, համագործակցություն և փորձի փոխանակում տարբեր երկրների մասնակիցների միջև:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Դասընթացի ընթացքում որպես գործնական կիրառման օրինակ մշակվել է "Fake News & Misinformation" թեմայով ապատեղեկատվության ճանաչման, տեղեկատվության ստուգման և աղբյուրների գնահատման մեթոդների կիրառմամբ ոչ ֆորմալ կրթական աշխատարան, որի նպատակն էր մասնակիցներին սովորեցնել տարբերակել ԱԲ-ի գործիքների միջոցով ստեղծված կեղծ տեղեկատվությունը և ապատեղեկատվությունը, քննադատաբար ուսումնասիրել տեղեկատվությունը, և գնահատել՝ արդյոք այն արժանի է վստահության: Դասընթացի ընթացքում ստացած գիտելիքների և գործիքների կիրառմամբ հետագայում իրականացվել է նաև տվյալ թեմայով աշխատարան՝ որպես ձեռք բերված կարողությունների գործնական փոխանցման օրինակ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Միջազգային մասնակիցների հետ շփումների և փորձի փոխանակման արդյունքում քննարկվել են Թունիսի Հանրապետությունում Erasmus+ երիտասարդական ծրագրերում հետագայում ներգրավվելու, ինչպես նաև Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի ներկայացուցիչների միջև հետագա համագործակցության և համատեղ նախաձեռնությունների իրականացման հնարավորությունները:

Քննարկվել է նաև Կանադայի Վաթերլոյի /University of Waterloo/ համալսարանի CEMC-ի հետ համագործակցության հնարավորությունը՝ հայ երեխաների և երիտասարդների համար միջազգային առցանց կրթական հնարավորությունների հասանելիությունն ընդլայնելու նպատակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նախարարություն է ներկայացվել Մ - 70841-2026 2/ Կանադայի University of Waterloo-ի մաթեմատիկայի և հաշվողականության կրթության կենտրոնի՝ CEMC, հարթակում որպես մասնակցող ուսումնական հաստատություն գրանցելու և քոլեջի համար CEMC School Account ստեղծելու վերաբերյալ: Հայտհայտը լրացվել է CEMC հարթակում: Հաստատման կամ մերժման վերաբերյալ պատասխանն ակնկալվում է երեք շաբաթվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

02.10.2026թ.